

որ դնում էինք մեր գրպանից լրագրի ծախսը պահպանելու համար, մենք տասնապիսի ընթացքում նուիրեցինք ազգին 20,000 ռուբլի:

Այդ քսան հազար ռուբլի էլ մենք չենք պահանջում հասարակութենից որ մեզ վերադարձնի, հաստատ գիտեցա՞յ որ երբէք յետ չենք ստանայ հայոց հասարակութենից այդ մեր գումարը: Միայն խնդրում ենք այսուհետեւ տալ մեզ աւելի մեծ թիւ բաժանորդներ, որպէս զի բացի «Մըշակից» կարողանայինք ուրիշ մի քանի ծախսեր էլ հոգալ մեր խմբագրական փողերից, առանց անդադար դիմելու հասարակութեանը այլ և այլ հանգանակութիւններով:

Մենք կրկնում ենք որ մեր տասնապիսի անձնական աշխատանքն էլ մենք չենք հաշուում մի որ և է ծխական, կամ միջնակարգ դպրոցի ուսուցիչ իրաւունք ունի ստանալ տարեկան մէկ, կամ երկու հազար ռուբլի ուժիկ, ձեմարանի վարձարեւոյնը, որոնք ոչինչով բարձր չեն նոյն միջնակարգ դպրոցների ուսուցիչներին, կարող են ստանալ տարեկան չորս, հինգ, վեց հազար ռուբլի ուժիկ, — իսկ մի հայոց ամենօրեայ թերթի խմբագիր ոչ թէ միայն իրաւունք չունի իր աշխատանքի համար, թէ կուզ մի հազար ռուբլի տարեկան համեստ ուժիկ ստանայու, այլ պէտք է իր գրպանից էլ իւրաքանչիւր տարի երկու, երեք հազար ռուբլի տալ, որպէս զի ժողովրդի մէջ մայրենի ընթերցանութիւնը տարածի:

Ի՞նչով խմբագրի աշխատանքը պակաս է

ուսուցչի աշխատանքից, եթէ աւելի զըժուար և աւելի ծանր չէ:

Այլ ևս չենք խօսում այն բանի վրա որ Եւրոպայում քաղաքական թերթերի խմբագիրները ահազին ուժիկներ են ստանում իրանց ծանր աշխատանքի համար:

Գ. Ա.

**ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ**

**ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՈՒ**

Ստացանք ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻՑ (ժուրնալ ՂՕրիան) լրագրի բաժանորդագին 41 ռուբլի 40 կոպէկ նետեալ անձերից: Միտումք քաւ. Գիւլումանց, Ալէքսանդր Տէր-Մկրտչեանց, Միքայէլ Տէր-Միքայէլեանց, Մինաս Արասխանեանց, Սարգիս Լաւրազարեանց, Լեւոն Քրիստիկեանց, Պարզիս Աղաճիրեանց, Յովհաննէս Փանեանց, Սարգիս Կուրդարեանց, Սարգիս Յակոբեանց, Եւսեպիակոս Կարապետ Խոջա-միրեանց, Յարութիւն Փանեանց, Յովհաննէս Կոստանդինեան, Խուրդի Մարգարեան, Մկրտիչ Ամատունի, Մեղքոն Քալանթարեանց, Առաջվայ բաժանորդական փողերի նետ կանի 740 ռուբլի 13 կոպէկ:

ՍՂՆԱԻՑ ստացանք 8 ռուբլի բաժանորդագին (ժուրնալ ՂՕրիան) համար նետեալ անձերից: Յովհաննէս Ղալաբեկեան, Վարդան և Ստեփան Լեւիկոյեանք, Ալէքսանդր Ամիրազեան, Սիմէոն Ղորղանեան, Ալէքսանդր Մաթէ-չիլի, իսկ փոստի ծախսը վճարել են Եւզէ և Կարեգին Տէր-Ստեփանեան: Պարտաւորութիւն ենք համարում յիշել որ Սղնախը մինչև այժմ ուղարկել է բաժանորդագին 101 ռուբլի 40 կոպէկ: Այժմ ստացված 8 ռուբլի մեր խմբագրու-

թեան մէջ եղած ընդհանուր բաժանորդական փողի նետ վիճենայի լրագրի համար, կանի 748 ռուբլի 13 կոպէկ:

Մեզ հաղորդում են ՄՕՍԿՎԱՅԻՑ որ պ. Քանանեանցի ինքնիշխան լազարեան ձեմարանի նախուցիչները արդէն կազմել են մի քանի խորհուրդներ ձեմարանում հայոց լեզուի դասատուութեան համար: Կազմվում է այդ լեզուի դասատուութեան համար մանրամասն պրոգրամա և ցուցակ այն հայերէն գրքերի, որոնք հայ աշակերտների ընթերցանութեանը մատչելի են: Եւստ ցանկալի է որ մասնազէտ անձինք հայ մամուլի մէջ իրանց կողմից օգնեն այդ կարևոր հարցի կանոնաւոր մշակութեանը:

Մեզ հաղորդում են Մոսկովայից որ այդտեղից էլ ուղարկվում են բաժանորդագին (ժուրնալ ՂՕրիան) լրագրին: Մոսկովայից, Վարնա ամսագրի միջնորդութեամբ հասցրած է վիճենայի լրագրին մօտ 100 ռուբլի արդէն և դարձեալ 50 ռուբլի հաւաքվեցաւ այնտեղ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ մեզ գրում են պ. Բաֆֆիի Ազուլիսից գրած նամակի վերաբերմամբ նետեալ: «Պ. Բաֆֆիի մեզ ուղարկած թերթիկը հայ ծածկագրութիւն է, որ վիճարկված կարելի է տեսնել Melanges Asiatiques, tirés des bulletens de l'Academie Impériale, St. Petersburg. 1864 գրքում, հանդուցեալ ակադեմիկոս Բրոսէի յօդուածում Varietés Arméniennes (եր. 65—77)»: Բէրթէից ուղարկած այս ծածկագրութեան օրինակները կարգացել է Բրոսէի համար մեր յարգելի հայրենակից, պրոֆէսոր Բ. Պատկանեան: Այդ ծածկագրութեան մի քանի խօսքեր գրված են արաբական այլանդակված թւագրերով: Իսկ մի քանիները գրված են սեպակի տառերի նմանութեամբ, ինչպէս և տեսանք թերթիկի վրա:

նր այնքան անխոհեմ լինի, որ կուրծքն հետևի մասնաւոր անձանց գծած գործունէութեան եղանակին, որովհետև նոքա կարող են շատ սխալ լինել:

Պ. Երկրորդականի յօդուածից ակնկեանում ենք, որ պ. Փանոսեան առաջարկում է հիմնել Կ. Պոլսի մօտ մի տիպար ազգային (образованная) փերթա, որ պէտք է պարագել անասնաբուժութեամբ, պանրագործութեամբ, իւղագործութեամբ, հաւապահութեամբ և այլն, և որ պէտք է մշակվեն Հայաստանից բերված հում բերքերը:

Չը գիտենք, ինչու պ. Երկրորդական հրճվում է այդ անձի առած լերկերի պլաններին: Վրա, բայց մենք չենք կարող յափշտակվել նոցա երևելիութեամբ, այլ մտադիր ենք նայել, թէ ինչքան նոքա իրական են:

Մայրաքաղաքի մօտ երբէք հայու չը կայ գիւղատնտեսական ֆերմա բանալ, որ մշակվելին Հայաստանի հում բերքերը: Եթէ կարելի լինէր այդ բերքերը Հայաստանից հասցնել մինչև Կ. Պոլսի, աւելի օգտակար կը լինէր ըստ մեծի մասին վաճառել նոցա առանց մշակելու: Անասնաբուժութեամբ, պանրագործութեամբ, իւղագործութեամբ և այլն օգտակար է միայն կենտրոններին հեռու տեղերում պարագել, որովհետև այնտեղ աւելի ածանցակին են կարևոր եղած առարկաները, ինչպէս են խոտը, յարդը, ընդդէնները, կաթը և այլն, իսկ մայրաքաղաքի մօտ օրինակ մի վեղոր կաթը աւելի մեծ գին ունի, քան նորանից պատրաստված պանիրը կամ իւղը: մի պուղ խոտը կամ յարդը աւելի մեծ գին ունի, քան թէ նորանից ստացված միսը կամ մի այլ արդիւնքը և այլն: Ուսումնասիրեցէք մայրաքաղաքի տնտեսական պայմանները և դուք կը համոզվէք, որ մի բերք այնտեղ աւելի շահաւէտ է հում հում վաճառել, քան նորան մշակել, արդիւնագործել և այնպէս վաճառահանել:

Մենք քաղաքներին մերձակայ կայտածներում չէ յաջողվում ոչինչ արդիւնագործութիւն, եթէ հում արդիւնքները կարելի է լինում անարտադրութեամբ քաղաք հասցնել: Բացի դորանից հում բերքերը հեռու Հայաստանից բերվելով, նոցա արժէքի վրա կը ծանրանայ աւագին ճանապարհածախսը և կրկնակի ու եռապատիկ կը թանկացնէ արտադրութեանց գինը: Ուրեմն մայրաքաղաքի մօտ գիւղատնտեսական ֆերմա հիմնելը անօգուտ է և ֆեւսակար: Այլի առաջ պէտք է ունենանք և այն, որ մայրաքաղաքի

մօտ աշխատանքի գինը խիստ մեծ է. իսկ եթէ կարելի եղաւ համայնական հիմունք տալ նորան, համայնքի անդամները ոչ թէ Վալայուչ, այլ խիստ նուազ վարձատրութիւն պէտք է ստանան, իսկ թէ դրանով համայնքի վարչութիւնը շատ անդամակիցներ կը կարողանայ գրաւել, այդ հակառակի է Զարմանում ենք պ. Փանոսեանի յափշտակութեանը վրա. նա կամենում է իր ֆերմայով կերակրել համարեա ամբողջ Կ. Պոլսի հայերին, բացի դորանից մի մեծ գումար յետ ձգել, Հայաստանում բանկեր ու կալուածներ հաստատել: Մենք ուրիշ ոչինչ չենք կարող ասել այդ ցնորութեանց մասին, միայն այն թէ այդ մարդու լեռանդը դովելի է և ուրիշ ոչինչ:

Եւստ կարելի է որ վաղն էլ մի ուրիշ փանտեսանց ելնէ համոզելու, որ Հայաստանի գիւղացու տնտեսական դրութիւնը բարձրացնելու համար պէտք է Լճործի մօտ մի տիպար ազա-մայր հիմնել Հայաստանի հում բերքերը մշակելու համար, և իրեն ցնորարանութիւնները ծածկելու համար սկսէ յարձակվել իր նմանների պոռուտաստութեանց: Ղէմ. Կա ի հարկէ այնքան զարմանալի բան չի լինի յափշտակող սրտերի համար:

Այս առարկութիւններից յետոյ ի դուր չէր լինի ներկայացնել մեր առաջարկութիւնը հասարակաց քննութեանը: Թերեւ նա էլ նիւթ կազմէր պարզելու մի ընկերութեան գործունէութեան խնդիրը:

Այդ առաջարկութիւնը ամփոփում ենք երեք կէտերի մէջ, որոնց ամեն մինի վրա կը խօսանք առանձին:

1) Այլի առաջ ունենալով Հայաստանի գիւղատնտեսութեան մի քանի յայտնի հանգամանքները, մենք լաւագոյն ենք համարում, որ մի ընկերութիւն, որ կանչված է նորա (գիւղատնտեսութեան) զարգացմանը ձեռնառու լինելու, սկզբնապէս դարձնէր իր ուշքը գիւղատնտեսական բերքերի արդիւնագործման արհեստների վերայ (сельскохозяйственная техника): Ահաւանիկ ինչու համար:

Յայտնի է, որ տնտեսական յառաջդիմութեան գլխաւոր խոչընդոտները մինչ է արդիւնքերի արտահանման զժուարութիւնը, Մի երկրորդի արդիւնահանութիւնը կանծաւոր և յաջող է ընթանում, նորա տնտեսական զարգացումը հաստատ հիւղերի վրա է դրված լինում. իսկ ընդհակառակը երբ արդիւնահանութիւնը զժուար-

անում է լաւ ճանապարհների քացակայութիւնից, զժուարանում է և տնտեսական յառաջդիմութիւնը: Այդ զժուարութիւնը աւելի զգալի է լինում մանաւանդ այն նահանգների համար, որոնք գլխաւոր վաճառակենտրոններից հեռի են ընկած: Արդիւնաբերողը իր հում բերքերը, ինչպէս են զանազան տեսակ մրգերէն, ընդդէն, միս, կաթ, խոտ, յարդ և այլն, չէ կարող հեռաւոր հրապարակները վաճառահանել, որովհետև նոցանից (բերքերից) մի քանիսը այնքան ածանցակին են, որ չարժէ ճանապարհածախսին. այսպէս են խոտը, յարդը և այլն, միւսները այնքան փափուկ առարկաներ են, որ մինչև տեղ հասնելը փչանում են և կորչում են իրենց արժէքը, այսպէս են պտղեղէնները, կաթը և այլն: Երբորդները գինը հրապարակներում խիստ փոփոխական է լինում, այնպէս որ հեռաւոր արտադրողը մեծ ըրիսկ արած կը լինի իր ապրանքը ուղարկելով այնտեղ. այսպէս են կենսական ամենակարևոր առարկաները, ինչպէս ընդդէնները: Սակայն մարդու հնարագիտութիւնը մասամբ մօտեցնում է հեռաւոր հրապարակը արտաբերողին: Այդ հնարագիտութեան մի արգասիքն է արդիւնագործութիւնը, որով հում բերքերը վերափոխվում են վաճառահանման աւելի ընդունակ առարկաների, այսինքն հում բերքերից ստացվում են այնպիսի առարկաներ, որոնք աւելի կարող են դիմանալ ճանապարհին, որոնց արժէքը այնքան կը բարձրանայ, որ մի աննշան պրօցէնտ միայն կը կազմէ նոցա գնի վրա, որոց գինը աւելի քիչ փոփոխութեան է ենթակայ լինում հրապարակներում և այլն: Այսպիսի առարկաներն են տեսակ տեսակ պանիրներ և իւղեր, շաքարեղէններ, օսլայ (квашеная), մրգերից պատրաստված անուշեղէններ, մինչև անգամ ընկալիքներ աւելի մօտ հրապարակների համար: Արդիւնագործութեան այս առարկաները, որովհետև պատրաստված են լինում հում բերքերի միայն մի քանի բազմապատկան նիւթերից, աւելի թեթեւացնում են վաճառահանման առարկայի կշիւը, բայց երբէք նորա արժէքը: Այսպէս մի հարիւր ֆունտ կաթից ստացվում է մօտ 10 ֆունտ պանիր կամ 4 ֆունտ իւղ, իսկ կաթի արժէքը չունեցող նիւթը — Չուրը, որ 87% է կազմում, զատվում է ստացվում են կաթի միայն թանկացնել հիւթերը, ինչպէս են կաղէխը և իւղը: ճանապարհի համար 100 ֆունտի վարձ պէտք է վճարելիքը, եթէ ուղղակի կաթը արտահանելիքը:

ՍՍԱՎՐՈՊՈԼԻՑ մեզ գրում են: «Մեր քաղաքի նայ ժողովուրդը տեսնելով, որ հին եկեղեցին շատ փոքր և հասարակ չիմված է, վճառում է մի նոր եկեղեցի կառուցանել: Ահա մենք փողեր ժողովել: Այդ ժամանակ պ. Մակար Պօպով, նոյնը որ դիտաւորութիւն ունի ահագին կտակ անել յօգուտ Նոր-Նախիջեանի, տեսնելով ժողովրդի ցանկութիւնը ունենալ մի նոր եկեղեցի, առնում է այդ հաւաքած չնչին գումարը և խոստանում է իր հաշուով շինել եկեղեցին, կրկնապարտում կառուցվում է բաւական մեծ և զեղեցիկ եկեղեցի, վերջապէս նոկտեմբերի 5-ին կառարկեցաւ նոր եկեղեցու օծման հանդէսը: Թեմական առաջնորդը հրաւիրել էր մօտիկ քաղաքներից քահանաներ, տիրացուներ և դպիրներ, որոնց ճանապարհի ծախսը և Արտավրատում ապրուստը խոստացել էր իր կարողութիւնից հոգալ պ. Պօպով: Ըրաւիրված ներք զալիս են, մի շարաթ քաղաքում մտաւ գիտաւորութեամբ: Սրանց համար ոչ տուն է պատրաստված, ոչ կերակուր կայ: Տեղիս երկու քահանաներ, իրանց կարողութեան չափ բնակեցնում ու կերակրում են հրաւիրվածներին իրանց նեղ բնակարաններում: Օծման հանդէսը վերջանում է, հրաւիրվածները գնում են ստանալու իրանց ճանապարհի ծախսը պ. Պօպովից, սա միայն երկուսին վարձատրում է ինչպէս հարկն է, իսկ մնացածներին միայն տալիս է ճանապարհի ծախս, կոպէկ կոպէկ հաշուելով անոքաժեշտ ծախսը, իսկ մի քանիներին ծախսից էլ պակաս է տալիս, վերջապէս մի երկուսին էլ ոչինչ չէ տալիս:»

**ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ**

«ПОРЯДОКЪ» ԼՐԱԳՐԻ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԸ

«ПОРЯДОКЪ» լրագրի մէջ կարդում ենք

իսկ վճարում ենք միայն 4—10 ֆունտի համար նորանից պատրաստված պանիրը կամ իւղը որտեսանելով: Այսպէս են և միւս առարկաները:

Թէև այդ արդիւնագործութեանց շատերը արդէն ի վաղուց գոյութիւն ունեն Հայաստանում, սակայն նոքա նահապետական ձեռք մշակվելով և չունենալով կանոնաւոր կազմակերպութիւն, չեն կարող արտահանութեան մշտական առարկայ դառնալ և իրենց ներքութեամբ ու ազնուութեամբ մրցել օտարերկրեայ արտաբերութեանց հետ և հրապարակ վստասակել մեծ կենտրոններում: Ուստի կարևոր է նոցա ազնուացնելուն և կազմակերպելուն ձեռնարկել:

Բայց ինչպէս հնարաւոր է գործել այդ նպատակի համար, ահա մի խնդիր, որի վրա յանգում է մեր առաջարկութեան առաջին կէտը: Այդ մասին մեր վիճուք տալու համար, մասնացոյց ենք անում քաղաքակրթեալ ազգերի վարձուքը զոչն նպատակաւ: Նոցա մէջ միայնակ միջոցը ճանաչված է գիւղացիների համայնական ընկերութիւնները (ассоциация) «L'union c'est la force» (ոյժը միութեան մէջն է) այդ է ընկերութեանց նշանաբանը: Գանի գիւղացիք ստանալին առանձին են գործում, քանի նոքա անգամ ոյժեր են կազմում, նոքա տկար են լինում և անընդունակ մեծ գործերում: Բայց երբ միանում են այդ անշտա ոյժերը և կազմում են մի ամփոփ ոյժ, այնուհետև նոքա պայտասված լինելով զմեզակ պարագաների ղէմ, կարող են ձեռնարկել լինել մեծ մեծ և իրենց խիստ շահաւէտ գործերի: Այսպիսի միութեան մէջ իւրաքանչիւրի շահերը ոչ թէ միմեանց հակառակ չէ լինեն, այլ ընդհակառակը շափազանց ներգաշնակ: Ամերիկայի մասը, ֆերմերները և Զուլիգերիայի գիւղացիք լաւ հակառակով համայնական գործողութիւնը նետաւոր են եղած համայնական պանրոցներ բանալու: Առանձին մի փոքր ֆերմեր կամ գիւղացի չի կարող այնքան մեծ քանակութեամբ կաթ արտաբերել, որ նրանից կարող լինի մեծ քանակութեամբ պանիր պատրաստել հեռու արտահանութեան համար: Բացի դորանից արհեստի համար հարկաւոր եղած ծախսերը չեն կարող հատուցանվել փոքր արդիւնագործութիւնով: Բայց ընդհակառակն մի քանի փոքր ֆերմերներ կամ գիւղացիք միանալով հաւաքում են իրենց փոքրաքանակ կաթերը և նոցանից կազմում են կաթի մի մեծ քանակութիւն, որի համար արդարեւ արժէ մի հասար-